ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 ապրիլի 2015 թ.

Հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովում ՀՀ ԳԱԱ նախագահի և ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարի զեկուցումներում և զեկուցումների քննարկմանը մասնակցած գիտնականների ելույթներում բարձրացված հարցերը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ գիտական բաժանմունքների տարեկան ընդհանուր ժողովների որոշումները, ՀՀ ԳԱԱ Ընդհանուր ժողովը որոշում է.

1. Հանձնարարել ԳԱԱ նախագահությանը.

ա/ մշակել գիտական կազմակերպությունների գործունեության գնահատման չափորոշիչներ,

բ/ շարունակել կիրառական հետազոտությունների արդյունավետության բարձրացման ռազմավարական ծրագրի, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ համակարգի ինֆրակառուցվածքի արդիականացման հատուկ պետական ծրագրի մշակումը,

գ/ դիմել ՀՀ Կառավարությանը ապահովելու ֆինանսական աջակցություն ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում ստացված ինովացիոն բնույթի արդյունքների նոր փաթեթը տնտեսության տարբեր ճյուղերում ներդրման նպատակով,

դ/ ՀՀ ԳԱԱ գիտական աշխատողների սոցիալական պայմանները բարելավելու նպատակով դիմել ՀՀ Կառավարությանը գիտական աստիճաններին տրվող հավելավճարները կենսաթոշակին աստիճանաբար ավելացնելու, ինչպես նաև մտավոր գործունեություն իրականացնողների արտոնությունները գիտաշխատողների վրա տարածելու հարցերով,

ե/ նպաստել ՀՀ ԳԱԱ գիտական կենտրոնների, ինստիտուտների, լաբորատորիաների համագործակցության ընդլայնմանը,

զ/ ապահովել Ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ կազմակերպվող գիտական և գիտամասսայական միջոցառումների անցկացման պատշաճ մակարդակը,

է/ մշակել հատուկ ծրագիր երիտասարդ գիտնականներին գիտական հետազոտություններում ավելի արդյունավետ ընդգրկելու ուղղությամբ,

ը/ անհրաժեշտ օգնություն ցուցաբերել ՀՀ ԳԱԱ գիտական հանդեսների աշխատանքների խթանմանը,

թ/ դիմել ՀՀ Կառավարությանը Հնագիտության և ազգագրության ինստիտուտում հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի ստեղծման հարցով,

ժ/ դիմել ՀՀ Կառավարությանը Հայկական ազգային հանրագիտարանի հրատարակության համար լրացուցիչ ֆինանսներ հատկացնելու հարցով:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ